

Այս վաղանցիկ գարնանային աշխարհքէս  
Թըռչմ, գամ ես անեղծ աշխարհդ այդ արագ,  
Որ տեղ մայրիկըս, վազուց է որ կանչել ես:  
Եւ գուցէ նա, աւաղ, սիրով մայրենի  
Ցիշում է արդ իրա որդւց Աշոտին ո:

Ե.

Իսկ ես հայրիկըս կէս մի ուրախ կէս տըրտում  
Լըռիկ կանգնուծ կանանց թուփի քամակից,  
Ամեն խօսքին ուշիւ ականջ եմ դընում,  
Յափրտակուած գեղատընուր Աշոտից:  
Եւ հայրագութ սիրով յայնժամ բորբոքուած  
Խիստ տագնապաւ մօտ Աշոտիս եմ վազում,  
Եւ երկար ժամ նորան սըրտիս հուպ տուած:  
Նունչըս նորա շընչի հետ եմ ես խառնում:  
Եւ հըրափայլ իմ աչքերիցըն ծածուկ  
Վարդակարմիր ծընոտի վերայ Աշոտիս  
Մին քանի կաթ թափում եմ ես արտասուք.  
Ո՛չ, սաստիկ էր յայնժամ փըղձուկըն իմ սըրտիս:

Զ.

Աշնա, ասի ապա նըմա կականմամբ:  
Քո Աստուծոյն քան զայդ աղօթք զօրտուոր  
Դու արել չ'ես բնաւ այդպէս եռանդեամբ:  
Զայնիդ լըսեց անշուշտ քո հայր երկնաւոր  
Արդ՝ երբ հրեշտակ դարձած գընաս Տէրիդ մօտ,  
Եւ սաւառնես շուրջ երկնակեաց քո մօրը,  
Օրհնիր յայնժամ էլի այս օրըն, իմ Աշոտ,  
Եւ միտըդ բեր երկընքումըն քո հօրը:

ՀԱՅՐ ՄԵՐ ՄԵՐ

Ա.

ՀԱՅՐ ՄԵՐ՝ դու որ քան զաստեղըս,  
Եւ քան զարեւ բարձրումըն ես.  
Որդեգրելով մեղի քեղ,  
Յաւետ գըթաս քան սկատես:

Բ.

ՄԵՐ օմեւանըն այս խոնարհ,  
Երկիրս ըլի քեղ տաճար.  
Ուր քո անունըդ սուրբ ըլի,  
Ոլողէս յերկինըս լուսափառ:

Գ.

Արքայութիւնդ որ երկրումն ,  
Սըրբոց արդէն է ըսկըսել .  
Հաճիր որ գայ ամենուս ,  
Որքեղ որդի ենք եղել :

Դ.

Քո պատութրանըն ընդունայն ,  
Թող չ'անցանէ , ով Աստուած .  
Այս որ մեր կենացն համայն ,  
Ամեն օրուան տո՛ր մեզ հաց :

Ե.

Խաղաղութեան հեղ հոգին ,  
Միշտ մեզ տիրէ ամենուն ,  
Որ ներենք մեր զբողին  
Որպէս և դու ես ներում :

Զ.

Քո զօրութիւն մեղի հետ  
Ըլի մեր գայթոս ճամբում ,  
Օքնիր մեղի ետ ընդ ետ  
Երբ փորձանքն է մերձենում :

Է.

Մեր կըսից հետ կռվումըն ,  
Երբ չարըն մեղ ընկըճէ ,  
Մի թող որ նա մեր հոգուն ,  
Տիրէ , երկնից մեղ զպէ :

Ը.

Մեր լայն եւ նեղ օրերումն  
Քո բանդ ըլի առաջնորդ ,  
Որ բո՞ փառացդ անսպատում  
Ամենքս ըլինք ժառանգորդ :

Թ.

Որովհետեւ փառք պատիւ  
Քեղ անեղիդ պատիւնի ,  
Արքայութիւն զօրութիւն  
Դարուց ՚ի դարս եւ հիմի :



ԴՐՈՅ ՈՒ ՏՐՈՅ

ԵՒ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԿԻԹ ԿԱՄ ՄՀԱՅԻ ԴՈՒՌ

ԾՐԱԳՐԵԿՑ Գ. Վ. Ա. ԱՐՄԱՆՅԱԿԵԱՆՑ :

Փարրիկ է սոյն Մատենիկ . բայց  
պարունակութեամբ յոյժ բաղըրիկ :  
Կը տեսնես իւր մէջ Հայրենեաց սիւ-  
րուն նկարագիր , բերանացի աւան-  
դութեանց ծրագիր , վէպեր ու ա-  
ռատղելներ բնածիր , և ամեն տեղ գիր  
ու բիր՝ անխափիր : Ընդարձակ չէ , բայց  
միակ է պարունակութեան կողմէն .  
Ճարտարահիւս չէ , բայց բնահիւս է .  
և այս է իւր մեծ արժանաւորութիւնն :  
Լեզուն փայլուն չէ . բայց սահուն է .  
բանաստեղծական չէ . բայց բնաստեղ-  
ծական է , բնութենէն առնուած է ,  
բնական գրուած է , ուստի և բնական  
հրապոր ունի : Ով որ բնութիւն կը  
սիրէ , ով որ Հայրենիք կը սիրէ , ով որ  
ժողովուրդ կը սիրէ , ով որ ժողովրդա-  
յին աւանդութեանց , զրուցաց և վե-  
պաց հետքեր կ'որոնէ , անհնար է որ  
Գրուն ՈՒ ԲՐՈՅՆ սիրով ըստ կարգաց :

Մէք շատ անգամ կրկնած եմք ,  
որ մեր Հայ Հայրենեաց պէս Հայ ժո-  
ղովրդեան կեանքն ես անմշակ է , հե-  
տագառուած , քննուած և գնահատ-  
ուած չէ : Աղջի աղդի յիշատակներու ,  
սուլորութեանց , վարուց ու բարուց  
Հանգեր կան , որոնք փորուան , զըս-  
նուած և զտուած չեն : Աշխարհ , որ  
որրան եղած է Մարդկութեան , աշ-  
խարհ , որ խանձարուր եղած է Քրիս-  
տոնէութեան , աշխարհ , որ միցարան  
եղած է մարտիր և պատերազմի , աշ-  
խարհ , որ հանգիսարան եղած է հա-  
ւատոց և նահատակութեան , այս աշ-  
խարհն գանձեր ունի իւր մէջ անտիր  
ջրհեղեղեան ժամանակներէն սկսած ,